05 ապրիլի 2024թ.

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին

Բարելավում ՍՊԸ-ի
տնօրեն՝ Դավիթ Սարգսյանին

Հարգելի Դավիթ Սարգսյան,

ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանի (այսուհետ՝ Գնորդ) և Բարելավում ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2023թ.-ի նոյեմբերի 28-ին կնքվել է համաձայնագիր, որով ուժի մեջ է մտել 2023թ.-ի նոյեմբերի 24-ին կնքված **ԱՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/14-1** ծածկագրով գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր): Պայմանագրի շրջանակներում Վաճառողը ստանձնել է պարտավորություն մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ապրանքները: Վաճառողին տրվել է 20 օրացուցային օր ժամանակ ապրանքները մատակարարելու համար, սակայն սահմանված ժամկետում Վաճառողի կողմից 1, 3, 8, 9, 11, 13 չափաբաժիններով սահմանված ապրանքների մատակարարում չի կատարվել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով ՀՀ Արմավիրի մարզ Արմավիրի համայնքապետարանը հարկադրված է 2024թ.-ի ապրիլի 8-ից Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծել: Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ հայտնում ենք, որ Վաճառողին տրվում է 3 աշխատանքային օր՝ որակավորման և պայմանագրի ապահովումները՝ համապատասխանաբար 75150 (յոթանասունհինգ հազար մեկ հարյուր հիսուն) ՀՀ դրամի և 50100 (հիսուն հազար մեկ հարյուր) ՀՀ դրամի չափով, վճարելու համար: Փոխանցումը անհրաժեշտ է կատարել Գնորդի բանկային հաշվին **(ՀՀ Ֆինանսների նախարարություն 900335201092)**:

Սահմանված ժամկետում փոխանցումը չկատարելու դեպքում պարտավորվում ենք որոշում կայացնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6/ա-րդ կետի համաձայն Բարելավում ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Հարգանքով՝

Արմավիրի համայնքի ղեկավար՝ **Վ. Սարգսյան**